

**Պատասխաններ**  
**հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի**

**12-րդ դասարան**

2. քմահաճույքը-**քմահաճույքները**, դառավ - **դարձավ**, իրեն ձեռքը- **իր ձեռքը**, ընտրությանը-**ընտրությունը**, յոթը-**յոթ**, ամբողջ -**բոլոր**, խոտհարքերը-**խոտհարքները**, բնակեցնելով այնտեղ իր **ազգակիցներով**- ազգակիցներին, հրամայեց հեռանալու- **հեռանալ**, արքայի կնքված - **կնքած**:

3. Հայոց արքան մի դուստր ուներ՝ նազելաճեմ ու գեղաչվի: Հայրը անսահման սիրում էր դստերը, և մշտապես ու անընդմեջ ի կատար էին ածվում աղջկա՝ անգամ խելահեղության հասնող քմահաճույքը: Երբ աղջիկը դառավ ծաղկահասակ օրիորդ, ամուսին ընտրեց ոմն օտար իշխանի՝ մերժելով իրեն ձեռքը խնդրող քաջագուն հայորդիներին:

Չխրախուսելով դստեր ընտրությանը՝ հայրը, այնուամենայնիվ, չասաց, որ դեմ է այդ միությանը. ավելին, աղջկան նվիրեց թանկարժեք օժիտ, այդ թվում՝ յոթը հայկական գյուղ:

Կարճ ժամանակ անց՝ մի քանի ամիս հետո, գեղեցկատես դշխուն, ցավոք, ծանր հիվանդացավ, և համայն աշխարհի ծագերից եկած բժշիկները նույնիսկ ի վիճակի չէղան փրկելու աղջկա կյանքը: Նենգ օտարականը մտածեց՝ կնոջ մահը հարմար առիթ է, որ իրականացնի իր վաղեմի նկրտումները: Նա, հայոց շեներից օր օրի արտաքսելով հայերին, հափշտակեց նրանց ունեցվածքը՝ թե՛ ջրարբի խոտհարքերը, թե՛ բերքառատ այգիները և թե՛ ամբողջ դաշտերը, ու բնակեցրեց այնտեղ իր ազգակիցներով:

Տեսնելով ստորաբարո փեսայի արարքը՝ արքան հրամայեց նրան անհապաղ հեռանալու հայոց հողերից: Մակայն այդ ապերախտը չարախնդորեն մատնացույց արեց արքայի կնքված ընծայագիրը: Այդժամ արքունական հեծելազորը բռնի արտաքսեց օտարականին: Իսկ իր դառը փորձից ելնելով՝ արքան հետնորդներին կտակեց խորախորհուրդ ու իմաստնալից այս խրատը. « *Հողն օժիտ չեն տալիս*»:

4. նազելաճեմ, գեղաչվի, խելահեղություն, քմահաճույք, ծաղկահասակ, թանկարժեք, գեղեցկատես, ջրարբի, խոտհարք, բերքառատ, ստորաբարո, չարախնդորեն, հեծելազոր, խորախորհուրդ, իմաստնալից

5. ուներ-ուներ, դարձավ-դառնալ, ասաց-ասել, է- եմ, եկած-գալ, չէղան-լինել, տեսնելով-տեսնել, արեց-անել, ելնելով-ելնել, չեն տալիս-տալ, , , բերեց-բերել, ուներ, , տվեց-տալ, եկած-գալ, չէղան-չլինել, բերեց-բերել, արեց-անել, ելնել:

6. **ներհուն**-խորաթափանց, խորիմաստ, իմաստալից

տուղտ-ծաղկաբույսի տեսակ

տարփածու- սիրեկան, սիրուհի,

սկիհ- արծաթյա թաս, որի մեջ եկեղեցում լցնում են նվիրաբերության գինին

նշավակել- ծաղրի՝ նախատինքի ենթարկել, նախատել

սոնապան- սրնքակալ, սրունքները պաշտպանող հարմարանք

անդր- արձան ,մարդու քանդակապատկեր, հոլանի- մերկ, առանց ծածկույթի, բաց

պայազատ-ազնվատոհմիկ, ազնվական, /հետնորդ, հաջորդ/ անդրանիկ, առաջին

սակավապետ- քչով բավարարվող, ժուժկալ, զուսպ

ճամարտակել- փրուն, բայց անբովանդակ խոսել, ճոռոմաբանել/ շաղակրատել,

շատախոսել:

7. ավելի լավ է առյուծի պոչ լինել, քան ոչխարի գլուխ- ավելի լավ է երկրորդական դիրք ունեցող խելոքը, քան անմիտ գլխավորը,  
լավագույնը լավի թշնամին է-լավագույնի հետևից ընկնելով՝ կարող ես լավն էլ կորցնել կամ փչացնել

2023

**Գնահատման չափանիշներ  
հայոց լեզվի մարզային օլիմպիադայի հարցաշարերի**

**12-րդ դասարան**

1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,4 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:  
(30 կետադրական նշան)
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: